Օպերացիոն համակարգի հիմնական ներքին հրամաններից է COPY հրամանը, որը հնարաւորութիւն է տալիս ֆայլերը փոխանցել տարրերի սարքերի, մասնաւորապէս մագնիսական սկաւառակների վրայ յիշող սարքերի միջեւ, այսինքն՝ պատճէնաւորում կատարել: Պատճէնաւորման համար անհրաժեշտ է նշել ինֆորմացիայի աղբյուրը, այսինքն՝ պատճէնաւորուող ֆայլի անուանազրումը, և ընդունիչը, այսինքն՝ այն ֆայլի անուանազրումը, որի մէջ պէտք է տեղադրուի աղբյուրի պարունակութիւնը: Բնական է, որ այդ երկու անուանազրերը չեն կարող համընկնել և կարող են ախաղար պարունակել: Անուանազրի մէջ սարքի անուան կամ ուղղութափայութեան դէպքում ենթադրում է ընթացիկ սարքը կամ գրացուցակը: Ընդունիչը անուանազրի մէջ ֆայլի անուան բացակայութիւնը նշանակում է, որ ֆայլի պատճէնը կ'ունենայ բնագրի անունը, տիպարի օգտագործումը՝ որ պատճէնի անունը կը պարունակի բանագրի անուան համապատասխան մասերը: Օրինակ՝

COPY A: B;

Հրամանը A: սարքի բոլոր ֆայլերի նոյն անուններով կրկնում է B: սարքի վրայ,

COPY FONTEDIT. EXE TYPE*. *

Հրամանը ընթացիկ գրացուցակի FONTEDIT. EXE ֆայլը կրկնում է նոյն սարքի վրայ TYPEEDIT. EXE անունով,

COPY A*. * C:\TEXT\B*. *

Հրամանի ընթացիկ գրացուցակի A տառով սկսուող բոլոր ֆայլերը կրկնում է C: սարքի TEXT գրացուցակի մէջ՝ սկսելով ֆայլերի անունները B տառով:

COPY Հրամանի միջոցով հնարաւոր է ֆայլերի միաւորում կատարել, օրինակ՝

COPRE TEXT. 1+TEXT. 2 TEXT

Հրամանը ընթացիկ գրացուցակի TEXT. 1 և TEXT. 2 ֆայլերը միաւորում է եւ դրանցում TEXT ֆայլի մէջ,

COPY T*. * TEXT

Հրամանը ընթացիկ գրացուցակի T տառով սկսուող բոլոր ֆայլերը միաւորում է եւ դրանցում FILEXT ֆայլի մէջ, ընդ որում ֆայլերը միաւորում են գրացուցակի հերթականութեամբ:

Որպէս աղբյուր կամ ընդունիչ, COPY Հրամանի մէջ ֆայլի անուանազրի փոխարժեալ կարող են օգտագործուել քոմիքիթերի տարրեր սարքերի անուններ: Ընդ որում

աղբյուր կարող են լինել ինֆորմացիայի ներածման, իսկ ընդունիչ՝ արտածման սարքերը: Օրինակ՝

COPY TEXT. 1 PRN

Հրամանը արտածում է ընթացիկ գրացուցակի TEXT. 1 ֆայլը տպող սարքի վրայ,

COPY CON TEXT. 3

Հրամանը ընթացիկ գրացուցակի TEXT. 3 ֆայլի մէջ գրանցում է ստեղնաշարի միջոցով ներածման ինֆորմացիան: Վերջին դէպքում ներածուող ինքառանչիւր տողը պէտք է աւարտուի ներածման ստեղնի միջոցով, իսկ ներածման աւարտը նշուում է դեկավարող ստեղնի եւ: Զ ստեղնի միաժամանակ սեղմումով: Այնուհետեւ ներածման ստեղնի սեղմելուց յետոյ ներածուած ամբողջ ինֆորմացիան գրանցում է սկաւառակի վրայ:

Սկաւառակի վրայ գրանցուած ֆայլերը կարող են վերանուանուել REN ներքին Հրամանի միջոցով, որին ունի COPY Հրամանին համարժէք կառուցուածք: Օրինակ՝

REN FONTEDIT. EXE TYPE*. *

Հրամանը ընթացիկ գրացուցակի FONTEDIT. EXE ֆայլին վերագրում է TYPEEDIT. EXE անունը:

Գործածութիւնից դուրս եկած ֆայլերի հեռացման համար նախատեսուած է DEL ներքին Հրամանը, որի մէջ նոյնպէս կարող է նշուել տիպար պարունակող ֆայլի անուանազրիը: Օրինակ՝

DEL A*. *

Հրամանը ընթացիկ գրացուցակից հեռացնում է բոլոր A տառով սկսուող ֆայլերը:

Ճկուն մաղնիսական սկաւառակի վրայ գրուած ինֆորմացիան կարող է ամբողջվին պատճէնաւորուել DISKCOPY արտաքին Հրամանի միջոցով: Ընդ որում պատճէնաւորուում է նաև սկաւառակի ձեւաչափումը, այնպէս որ այս Հրամանի միջոցով նոր սկաւառակի վրայ պատճէնաւորում կատարելիս անհրաժեշտ չէ այն նախազէն ձեւաչափի: Հարք է նշել, որ DISKCOPY Հրամանի միջոցով հնարաւոր չէ պատճէնաւորել կարծը մաղնիսական սկաւառակները: Այս Հրամանում սովորաբար նշուում են ինֆորմացիայի աղբյուրը եւ ընդունիչը, օրինակ՝

DISKCOPY A: B:

Հրամանը A: սարքում աեղազբուած սկաւառակի վրայ պարունակուուղ ինֆորմացիան ամբողջովին կրկնում է B: սարքում աեղազբուած սկաւառակի վրայ: Պատճէնաւորումը կարող է կատարուել նաև որպէս աղբյուր եւ ընդունիչ օգտագործելով նոյն սարքը, օրինակ՝

DISKCOPY A: A:

Տուեալ դէպքում քոմիքիթերի օգիրատիւ. յիշող սարքի ծաւալից կախուած համարժը օգտագործութիւն հոմեզպատասխան յուշումների ձեւով մի քանի անգամ առաջիկում է A: սարքի վրայ աեղազբուի բնագրերը կամ պատճէնը պարունակող սկաւառակը: Նոյն քոմիքութիւնը ընթացիկ սարքի վրայ իրագործում է սարքերի անուններ չպարունակուից, օրինակ՝

DISKCOPY

Հրամանիր:

4. 3. Ծրագրերի թողարկում

Ֆայլերի կարեւորագոյն դաս են կազմում մեքենայական կոդով, այսինքն՝ միկրոպրոցեսորի հրամանների յաջորդականութեան ձեւով ծրագրեր պարունակող ֆայլերը: Ի տարբերութիւն բարձր մակարդակի ծրագրաւորման լեզուով, օրինակ րէյսիկով, սկաւառակի վրայ գրանցուած ծրագրերի, մեքենայական կոդով գրանցուած ծրագիրը կարող է անմիջականօրէն բեռնաւորուել քոմֆիւթերի յիշողութեան մէջ եւ թողարկել: Այդ պատճառով յաճախ մեքենայական կոդով գրանցուած ծրագրերը կոչում են բեռնաւորուող կամ թողարկուող ծրագրեր: Բարձր մակարդակի ծրագրաւորման լեզուով գրանցուած ծրագրերից յատուկ թարգմանող ծրագրերի միջոցով ստեղծուում եւ սկաւառականների վրայ մեքենայական կոդով գրանցուում են թողարկող ծրագրերը: Այդպիսի ծրագրեր պարունակող ֆայլերը ունեն .COM կամ .EXE տիպերը, որոնք իրարից տարբերուում են միայն արտաքին յիշող սարքերից ուկերատիւ յիշողութեան մէջ բեռնաւորելու եւ վերջինիս հասցէների վերաբաշման սկզբունքներով: Օգոտագործողի համար այդ տարբերութիւնը չօշափելի չէ, եւ երկու սիմպի ծրագրերն էլ նոյն եղանակով են թողարկուում: Ծրագրի թողարկման համար անհրաժեշտ է համակարգի հրաւերքի առկայութեան դէպքում ներածել նրա անունը տուանց սիմպի: Ընդ որում այդ անունով ֆայլը պէտք է դտնուի ընթացիկ գրացուցակի մէջ: Օրինակ՝ եթէ ընթացիկը FONT գրացուցակն է, ապա տեքստերի խմբագրման ծրագիրը կարելի է թողարկել ներածելով

EDITOR

անունը, իսկ պատկերների վերամշակման ծրագիրը՝ ներածելով

PAINTER

անունը: Որոշ դէպքերում ծրագրերի աշխատանքի համար պահանջւում է ֆայլի անունից յետոյ ներածել լրացուցիչ յատկանիչներ, որոնք կարող են բաղկացած լինել կամայական նշաններից: Յաճախ որպէս յատկանիչ օգտագործուում են նոյն կամ մէկ այլ գրացուցակում գտնուող ֆայլերի անունները: Օրինակ՝ եթէ պէտք է խմբագրուի HELP.TXT ֆայլի մէջ պարունակուող տեքստը, ապա ծրագիրը կարող է թողարկուել

EDITOR HELP.TXT

Հրամանի միջոցով: Այսպիսով՝ կիրառական ծրագրերի թողարկումը ոչնչով չի տարբերուում օպերացիոն համակարգի հրամանների կատարումից:

Ուրիշ (ոչ ընթացիկ) գրացուցակի մէջ ընդգրկուած ծրագիրը կարելի է թողարկել՝ նշելով նրա ամբողջ անուանագիրը: Օրինակ, անկախ նրանից, թէ որ գրացուցակն է ընթացիկ, պատկերների վերամշակման ծրագիրը կարելի է թողարկել

C:\SERVIS\FONT\PAINTER

Հրամանի միջոցով:

Ծրագրերի թողարկման համար պարտադիր չէ նշել նրա ամբողջ անուանումը կամ ընթացիկ դարձնել այն պարունակող գրացուցակը: Եթէ պահանջուող ֆայլը ընթացիկ գրացուցակի մէջ բացակայում է, ապա այն յաջորդաբար որոնուում է PATH հրամանի մէջ թուարկուած ուղիներով: Այդ հրամանի մէջ կարող են գրուել մի

շարք միմեանցից կէտ ստորակէտով (;) բաժանուած սարքի անուններ կամ ուղիներ, օրինակ՝

PATH C:\;C:\DOS;C:\SERVIS;C:\SERVIS\FONT

Հրամանի կատարումից յետոյ համակարգը յիշում է նրա մէջ ընդգրկուած ուղիների յաջորդականութիւնը եւ օգտագործում այն ամէն անգամ, երբ օգտագործողը օպերացիոն համակարգի արտաքին հրաման է կատարում կամ ծրագիր է թողարկում: Բերուած հրամանը նշանակում է, որ եթէ նշուած արտաքին հրամանին կամ ծրագրին համապատասխանող ֆայլը ընթացիկ գրացուցակում չի գտնուում ապա այն որոնուում է սկզբում C: սարքի հիմնական գրացուցակում, այնուեւեալ DOS անունով գրացուցակում եւ այլն: Տուեալ դէպում անկախ նրանից, թէ որ գրացուցակն է ընթացիկ, պատկերների վերամշակման ծրագիրը կարելի է թողարկել ներածելով միայն ծրագիր անունը՝

PAINTER

նշանակուած որոնման ուղիները վերացնել կարելի է

PATH;

Հրամանի միջոցով:

Թողարկուող ֆայլերի առանձնայատուկ դաս են կազմում այսպէս կոչուած փաթեթային ֆայլերը, որոնք միշտ .BAT տիպն ունեն: Նկ. 50ում ներկայացուած ֆայլերից միայն մէկն է (ARM, BAT) այդ դասին պատկանում: Փաթեթային ֆայլերը, ի տարրերութիւն մեքենայական կոդով գրանցուած ծրագրերի, սովորական տեքստ են պարունակում, որում ամէն տողի վրայ գրուած է օպերացիոն համակարգի հրաման կամ ծրագրի անուն եւ թողարկուում նոյն եղանակով, ինչպէս միւս ծրագրերը: Այդ առումով փաթեթային ֆայլերը կարող են ստեղծուել, խմբագրուել եւ գրանցուել սկաւառակի վրայ տեքստերի վերամշակման ծրագրերի միջոցով: Օպերացիոն համակարգը սկսում է իր աշխատանքը սկաւառակի վրայ յատուկ AUTOEXEC.BAT ֆայլի որոնումից եւ եթէ գտնում է այն, ապա անցնուում է նրա մէջ թուարկուած հրամանների կատարմանը: Դա բաւական յարմար է, քանի որ հնարաւորութիւն է տալիս քոմփիւթերի նախնական թողարկման ժամանակ առանց օգտագործողի մասնակցութեան ոչ միայն համապատասխան սարքերը նախապատրաստել, այլև թողարկել նշուած ծրագիրը: Օրինակ, եթէ օպերացիոն համակարգը պարունակող սկաւառակի վրայ գրանցուած է նաեւ տեքստերի վերամշակման EDITOR ծրագիրը եւ

EDITOR

տեքստը պարունակող AUTOEXEC.BAT ֆայլը, ապա քոմփիւթերի թողարկումից յետոյ համակարգը անմիջապէս կ'աշխատանքնի տեքստերի վերամշակման ծրագիրը:

Օպերացիոն համակարգի մէջ մտնում են մի չափ ներփին հրամաններ, որոնք հիմնականում օգտագործուում են փաթեթային ֆայլերում՝ ECHO, PAUSE, REM եւ այլն: Սովորաբար փաթեթային ֆայլի կատարման ժամանակ տեսատիպի վրայ յաջորդաբար արտածեում են նրա մէջ մտնող բոլոր հրամանները: Եթէ ֆայլի մէջ ընդգրկուի

ECHO OFF

Հրամանը, ապա նրան յաջորդող հրամանները չեն արտածուի, իսկ

ECHO ON

Հրամանից յետոյ արտածումը կը վերականգուի: Ֆայլի մէջ աւելցրած

PAUSE

Հրամանից յետոյ յաջորդ հրամանը կը կատարուի միայն օգտագործողի կողմից որեւէ ստեղն սեղմելուց յետոյ: Այս հրամանում կարող է ընդունել լրացուցիչ Հաջորդագրութիւն, որը նրա կատարման ժամանակ կ'արտածուի տեսատիպի վրայ: Օրինակ՝

PAUSE Այխապատրաստէք տպող սարքը

Հաջորդագրութիւնը չ'արտածուիր, եթէ ֆայլի մէջ տուեալ հրամանին նախորդել է ECHO OFF հրամանը: REM հրամանը նախատեսուած է փաթեթային ֆայլի կատարման ընթացքում տարբեր տիպի հաջորդագրութիւններ տեսափակի վրայ արտածելու համար եւ ի տարբերութիւն PAUSE հրամանի՝ չի ընդհատում ֆայլի կատարումը: Օրինակ՝

REM Ենրածում է տպատառը

Բացի վերը բերուած օրինակներից փաթեթային ֆայլերը կարող են պարունակել ուրիշ յատուկ հրամաններ, որոնք հնարաւորութիւն են տալիս կատարման պայմանական, կրկնուող եւ այլ գործողութիւններ:

5. ԱԼԳՈՐԻԹՄՆԵՐ

5. 1. Ալգորիթմի հասկացութիւնը – Ալգորիթմի ներկայացման եղանակներ

Դուք գիտէ՞ք ինչպէս են պատրաստում խորովածը: Փորձենք նկարագրել այդ հաճելի արարողութիւնը:

1. Վերցմել միս, սխ, բացախ, պղպեղ եւ աղ:
2. Խորատել միսը եւ սոխը:
3. Խառնել մէկ ամամի մէջ միսը եւ սոխը:
4. Աւելացնել աղը, պղպեղը եւ բացախը:
5. Թողմել ստացուածը 3-4 ժամով:
6. Շարել միսը շամփուրների վրայ:
7. Վառել կրակը:
8. Սպասել մինչեւ կրակը նստի:
9. Դնել շարուած միսը կրակի վրայ:
10. Հետեւել կրակին:
11. Եթէ միսը եփուել է, կատարել 12րդ հրահանգը՝ հակառակ դէպքում՝ 10րդը:
12. Մատուցել խորովածը:

Մենք ներկայացրել ենք ցուցում, որը բաղկացած է առանձին յատակ հրամաններից: Այդ հրամանների յաջորդական կատարումը, յոյսով ենք, կը բերի նպատակին՝ խորովածի պատրաստմանը: Նկատենք որ՝

1. Բոլոր հրամաններում առաջին հերթին նշուած է կատարուող գործողութիւնը (վերցնել, կտրատել, քողնել եւ այլն) եւ յետոյ այն առարկաները, որոնց նկատմամբ կատարում է գործողութիւնը (միսը, սոխը, կրակը . . .).

2. Բացակայում են հրամանների բացատրութիւնները՝ օրինակ, ինչի՞ համար է պէտք աւելացնել պղպեղը եւ բացախը:

Համարենք որ այս գործողութիւններն իրագործող մարդու համար ամենեւին էլ պարտադիր չէ իմանալ իւրաքանչիւր հրամանի իմաստը: Նա պէտք է միայն հետեւի կարգադրադրին, չիսիսուելով՝ հրամանների յաջորդականութիւնը:

Ճշգրիտ կարգապահքիրը՝ կատարելու գործողութիւնների այնպիսի յաջորդականութիւններ, որն աւզուած է ցանկալի արդիւնքի ստացմանը կամ առաջադրուած խնդրի լուծմանը անուանում է ալգորիթմ:

Ալգորիթմը բառի պատամաթիւնը կապուած է IXրդ գարի ուզբէկ մաթեմատիկոս Ալ-Խորեզմի անուան հետ, որը ճեւակերպել է տասական համակարգում թուարանական գործողութիւնների կատարման կանոնները: Ալգորիթմի հասկացութիւնը

Դայն կիրառում է գտել մաթեմատիկայի, ֆիզիկայի, տնտեսագիտութեան եւ այլ բնագաւառներում:

Ալորեայ կեանքում մեր բոլոր գործողութիւնները նկարագրում ենք բառերով: Այդ նոյն խօսակցական լեզուն մենք կարող ենք օգտագործել ալգորիթմների նկարագրման ժամանակ, եթէ համարակալենք ներկայացուած գործողութիւնները: Աղորիթմների ներկայացման այդ եղանակը կարելի է անուանել բանաւոր շարադրութիւն քայլերի միջոցով:

Բերենք այդպիսի ալգորիթմի եւս մի օրինակ (դուք հաւանաբար կուահեցիք, որ խորոշած պատրաստելու ալգորիթմը կազմուած էր հենց այդ եղանակով): Ներկայացնենք գործողութիւնների յաջորդականութիւնը, որը պէտք է կատարել ճանապարհին անցնելու համար (նկ. 52):

Ինչպէս տեսնում ենք ալգորիթմ կազմում են ոչ միայն հաշուարկային խնդիրներ լուծելու համար: Իսկ ի՞նչ եղանակներ կան հաշուարկային խնդիրների ալգորիթմների ներկայացման համար:

Դիտարկենք օրինակներ:

Խնդիր.- Հերոնի բանաձեւով հաշուել ա, բ, ս կողմեր ունեցող եռանկեան մակերեսը:

1. ՆԵՐԱՄԵԼ ա, բ, ս ;
2. ՀԱՇՈՒԻԾԼ $p = (a+b+c)/2$;
3. ՀԱՇՈՒԻԾԼ $y = p(p-a)(p-b)(p-c)$;
4. ՀԱՇՈՒԻԾԼ $S = \sqrt{y}$
5. ԱՐՏԱՄԵԼ S ;
6. ՎԵՐՋ :

Ալգորիթմների ներկայացման այս եղանակը անուանենք բանաձեւերի յաջորդականութիւն:

Ալգորիթմների միասնական եւ ճշգրիտ գործուման համար ստեղծուած է նշանակումների եւ կանոնների ձեւայնացուած համակարգ, որը կոչում է ալգորիթմի լեզու:

Նկարագրենք հետեւալ խնդրի լուծման գործողութիւնների յաջորդականութիւնը ալգորիթմական լեզուով:


Խնդիր.- Կառուցել $1/(X-1) + 1/(X-3)$ արտայատութեան արժէքի հաշւման ալգորիթմը:

ԱԼԳ ԱՐԺԵՔ (ԻՐԿ x , y , ՏԵՔՍՏ p)


Ա.ՐԴ x

Ա.ՐԴ y, P


ՃԱՆԱՊԱՐՀՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱԼԳՈՐԻԹՄ



- 1 ՔԱՅԼ. ԿԱՆԳՆԵԼ **A** ԿԵՏՈՒՄ ;
 2 ՔԱՅԼ. ՆԱՅԵԼ ԶԱԽ ;
 3 ՔԱՅԼ. ԵԹԵ ՄԵՔԵՆԱՑ Է ՄՈՏԵՆՈՒՄ,
ԿԱՏԱՐԵԼ 2 ՔԱՅԼԸ, ՀԱԿԱՌԱԿ
ԴԵՊԲՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ 4 ՔԱՅԼԸ ;




- 4 ՔԱՅԼ. ԳՆԱԼ ԴԵՊԻ **B** ԿԵՏԸ ;



- 5 ՔԱՅԼ. ԿԱՆԳՆԵԼ **B** ԿԵՏՈՒՄ ;

- 6 ՔԱՅԼ. ՆԱՅԵԼ ԱԶ ;



- 8 ՔԱՅԼ. ԳՆԱԼ ԴԵՊԻ **C** ԿԵՏԸ ;

?

- 9 ՔԱՅԼ. ՎԵՐՋ :

Եթէ $x=1$ ԿԱՄ $x=3$

ԱՊԱ R := "y-ի ԱՐԺԵՔԸ ՈՐԾՈՒԱԾ ԶԷ"

ԱՅԼԱՊԷՍ R := "y-ի ԱՐԺԵՔԸ ՈՐԾՈՒԱԾ Է"

$$y := 1/(x-1) + 1/(x-3)$$

ԱԻԱՐՏ

ԳԵՐՁ

Ինչպէս տեսնում են ալգորիթմական լիցուի բառակազմն ընդգրկում է բացի սովորական տեքստից նաև մաթեմատիկական պայմանանշաններ՝ հաստատուններ, փոփոխականներ, գործողութիւնների նշաններ, փակագծել եւ այլն:

Ալգորիթմաների նկարագրման յարմար եւ տեսանկի եղանակներից մէկն է գրաֆիկական ներկայացումը բուկ-սիմետրի միջոցով:

Առանձին բլոկներում, որոնք իրենցից ներկայացնում են երկրաչափական պատկերներ, նկարագրում են կատարուաց գործողութիւնները, իսկ կատարման հերթականութիւնը ցոյց է տրում պարագաների միջոցով (նկ. 53, 54):

Ցոյց տրուած օրինակի 13րդ բլոկում առկայ է որեւէ պայման՝ դիցուք $a > b$: Եթէ պայմանը բաւարարում է, այսինքն a -ն խորագիս մեծ է b -ից, ապա ալգորիթմը շարունակում է "այո" ճիշով իւ կատարում է 14րդ բլոկում նշուած գործողութիւնը, իսկ եթէ a ոչ՝ ապա 15րդը: Ինչպէս տեսնում ենք պայման ստուգող բուկը պէտք է ունենայ երկու իւ միայն երկու ելք՝ "այո" և "ոչ": Ի տարրերութիւն, օրինակ, հաշուղական գործողութիւնն պատկերող բլոկին, որն ունի միայն մէկ ելք:

Դիտարկուած հղանակներով կազմուած ալգորիթմանը նախատեսուած են իրագործուելու մարդու կողմից: Էլեկտրոնային հաշուիչ մեքենայի միջոցով ալգորիթմը իրացրուելու համար, այն պէտք է ներկայացնի որեւէ ծրագրաւորման լիցուով:

Մրացրաւորման լիցուն իրենից ներկայացնում է մեւական նշանային համակարգ, որը օգտագործում է մարդու իւ հաշուիչ մեքենայի միջեւ կապ ստեղծելու համար եւ նախատեսուած է տուեալների իւ ալգորիթմների նկարագրման ու մշակման համար:

Բերնք մի ծրագրի օրինակ, որը դրուած է բլուիկ լիցուով:

Կազմել $Y=1/(x-1) + 1/(x-3)$ արտայայտութիւն արժեքի հաշւման ծրագիրը բէյսիկ լիցուով:

10 INPUT X

20 IF X=1 THEN 70

30 IF X=3 THEN 70

40 LET Y=1/(x-1) + 1/(x-3)

50 PRINT "Y-ի արժեքը որոշուած է՝ Y=" ; Y

60 STOP

70 PRINT "Y-ի արժեքը որոշուած չէ"



80 STOP

90 END

ԲԼՈԿ - ՍԽԵՄԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԱՆՈՒԱՆՈՒՄ	ՆՇԱՆԱԿՈՒՄ	ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ
1		ՀԱՅՈՒԱՐԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ
2		ՊԱՅՄԱՆԻ ՍՏՈՒԳՈՒՄ
3		ՑԻԿԼԻ ՍԿԻԶԲԵ
4. ԿԱՆԽՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՊՐՈՑԵՍ		ՀԱՅՈՒԱՐԿԱՆ ԵՆԹԱԾՐԱԳՐՈՎ
5. ՓԱՍՏԱԹՈՒՂԹ		ԱՐԴԻԽՆՔԻ ԱՐՏԱՆՅՈՒՄ
6. ՊԵՐՖՈՔՍՐ		ՏՈՒԵԱԼԵՐԻ ՆԵՐԱՆՅՈՒՄ ՊԵՐՖՈՔՍՐԻ ՄԻՋՈՑՈՎ
7. ԱՆՑՈՒՄ		ԳՆԵՐԻ ԸՆԴՀԱՏՈՒՄ
8. ԳՈՐԾԱՐԿՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ		ՍԿԻԶԲ, ՎԵՐՁ
9. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ		ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ԲԼՈԿԵՐԻ ՄԻԱՅՄԱՆ ՁԵՒԵՐ



նկ. 54

Եւ այսպէս մենք նկարագրեցինք ալգորիթմի ներկայացման 5 եղանակ (նկ. 55): Յաջորդ պարագափաներում մենք կը դիտարկենք բազմաթիւ խնդիրների լուծման ալգորիթմները, որոնք կ'օգննեն մեզ հասկանալ ալգորիթմների կազման հիմնական մեթոդները եւ սկզբունքները: Ալգորիթմների ներկայացման համար մենք ընտրել ենք զրաֆիկական եղանակը (բլոկ-սխեմաներ), քանի որ զանում ենք, որ այն դարձնում է ալգորիթմը պատճեռաւոր եւ հչշտ ուրացուող:

5. 2. Ալգորիթմի յատկուրիւնները

Մենք արդէն դիտենք, թէ ինչ է իրենից ներկայացնում ալգորիթմը: Այժմ տեսնենք, թէ ինչ յատկութիւններ պէտք է այն ունենայ:

1. Դիսկրետուրիւն:

Ինչպէս դիտենք ալգորիթմի կատարումը բաժանում է առանձին գործողութիւնների-քայլերի: Յաջորդ գործողութեանը անցնելու համար իրազրծողը պարտաւոր է լրիւ աւարտել նախորդը:

2. Ճշգրտութիւն:

Ալգորիթմը պէտք է կազմուած լինի այնպէս, որ իրազրծողը միարժէքօրէն իմանայ, թէ որ քայլն է կատարելու յաջորդը:

3. Որոշակիութիւն:

Ալգորիթմը չպէտք է պարունակի այնպիսի գործողութիւններ, որոնք հնարաւոր չեն իրադրել: Այլ կերպ ասած ալգորիթմը պէտք է հասկանալի լինի:


Եթէ անդրադառնանք մեր դիտարկած օրինակներին, ապա կը տեսնենք, որ խորոված չի նշուած օգտագործուող մարդ, սովոր եւ այլ մթերքների քանակը: Այդ թերութիւնը ալգորիթմը իրազրծողի համար դարձնում է անհասկանալի: Առաջարկում ենք լրացնել խորոված պատրաստելու ալգորիթմը՝ հաշուի առնելով նշուած թերութիւնները:

4. Արդիւնաւետութիւն:

Ալգորիթմի գործողութիւնների կատարումը սկզբնական տուեալների նկատմամբ պէտք է բերի որոշակի արդիւնքի: Նշենք, որ "խնդիրը լուծում չունի" պատասխանը համարւում է լիարժէք արդիւնք:

5. Մասսայականութիւն:

Այս յատկութիւնը ենթադրում է, որ նոյն ալգորիթմի միջոցով հնարաւոր է լուծել բազմաթիւ միատիպ խնդիրներ՝ նախնական տուեալների զանազան տարբերակների դէպքում:



Նկ. 55

6. Վերջաւորութիւն:

Ցանկացած ալգորիթմ պէտք է վերջաւոր քանակի գործողութիւնների կատարումից յիսոյ հասնի արդիւնքի:

Հարցեր եւ վարժութիւններ.

1. Զեւակերպեմք ալգորիթմի սահմանումը:
2. Բերէք ձեզ յայտնի ալգորիթմների օրինակներ:
3. Ի՞նչ եղանակով են ներկայացնուում ալգորիթմները:
4. Ներկայացրէք միջբաղամայն աւտոմատ հեռախոսով օգտուելու ալգորիթմը բանաւոր շարադրութեան եղանակով:
5. Կազմեմք սուրճ պատրաստելու ալգորիթմ:
6. Զեւակերպէք եւ զրի առէք ալգորիթմ, որը մախատեսուած է կարկինի եւ բանոնի օգնութեամբ.
ա) կիսել տրուած նաևուածը.
բ) բաժանել տրուած նաևուածը երեք հաւասար մասերի:
7. Նշենք ալգորիթմների յատկութիւնները:
8. Ի՞նչ է նշանակում ալգորիթմի որոշակիութիւնը:
9. Ճշգրիտ է արդեօֆ նախապարհին անցնելու ալգորիթմը:
Հիմնաւորէք ձեր պատրախամը:
10. Քանի՞ մուտք կարող է ունենալ.
ա) ուղղանկին բլոկը.
բ) շեղանկին բլոկը:

5. 3. Ալգորիթմների տիպերը

Ալգորիթմները լինում են 2 տիպի՝ դժային եւ ճիւղաւորուած:



Ճիւղաւորուած ալգորիթմների զասում առանձին հետաքրքրութիւն են առաջնում ցիկլային ալգորիթմները, որոնք պարունակում են կրկնուղ գործողութիւններ:

Դիստրկենք մի օրինակ (նկ. 56):

Ինչպէս երեւում է ներկայացնուած բլոկ-սխեմայից Զրդ բլոկը ներածում է նախնական տուեաները՝ հսանկեան կոզմեմը ա, բ, ս: Ցրդ բլոկում կատարում է կիսապարագծի հաշուարկը: Նշենք, որ հաշուարկները կրծատելու նպատակով Հերոնի բանաձեւից սատցուած անդամը, որը նոյնն է բլոկը երեք բարձրութիւնների հաշուարկի բանաձեւերում, հաշուած ենք միայն մէկ անդամ եւ նշանակում է (4րդ

ԳԾԱՅԻՆ ԱԼԳՈՐԻԹՄ

ՀԱՇՈՒԵԼ a, b, c ԿՈՂՄԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՌԱՆԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝




$$h_a = \frac{2}{a} \sqrt{p(p-a)(p-b)(p-c)}$$

$$h_b = \frac{2}{b} \sqrt{p(p-a)(p-b)(p-c)}$$

$$h_c = \frac{2}{c} \sqrt{p(p-a)(p-b)(p-c)},$$

ՈՐՏԵՇ $p = \frac{a+b+c}{2}$



բլոկ): Տրդ բլոկի միջոցով տպում ենք բարձրութիւնների մեծութիւնները, որոնց հաշուարկը կատարուել է 5, 6, 7 քայլերում:

Հեշտ է նկատել, որ բերուած օրինակում զործողութիւնները (քայլերը) կատարուած են յաջորդաբար նրանց հերթական համարների աճման կարգով, առանց ետք վերադասնակու կամ որեւէ գործողութիւն չըջնցելու: Այդպիսի ալգորիթմները կոչում են գծային: Նրանք չեն պարունակում պայմանի ստուգման գործողութիւն: Ասենք, որ առաել հետաքրքրութիւն են առաջացնուած ծիւղաւորուած եւ ցիկլային ալգորիթմները եւ մենք հիմնականում կը դիտարկենք այդպիսի խնդիրներ:

Ակնենք պարզագոյն խնդիր (նկ. 57):

Այստեղ ծիւղաւորուած կատարուած է Յրդ բլոկի միջոցով, երբ ստուգում է $x \geq 0$ պայմանը: Եթէ այն տեղի ունի ($x \geq 0$), ապա կատարուած է "այո" ճիւղի գործողութիւնը (Յրդ բլոկ), իսկ եթէ տեղի չունի ($x \leq 0$)՝ "ոչ" ճիւղի գործողութիւնը (4րդ բլոկ):

Այսինքն ծիւղաւորուած է կոչուած այն ալգորիթմը, որը պարունակում է որեւէ պայմանի ստուգման գործողութիւն:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնուած պայմանը:

Պայմանը՝ տրամաբանական արտայայտութիւն է, որը կարող է ընդունել հետեւեալ երկու արժեքներից մէկը՝ "ճշմարիտ" կամ "կեղծ": Եթէ պայմանը բաւարարուած է, ապա այն ընդունուած է "ճշմարիտ" արժեքը, իսկ եթէ այն չի բաւարարուած՝ "կեղծ" արժեքը: Այլ կերպ ասած պայմանը կարելի է դիտարկել որպէս հարց, որի հնարաւոր պատասխաններն են "այո" (ճշմարիտ) կամ "ոչ" (կեղծ): Ըստ այդ պատասխանի էլ կատարուած է ալգորիթմի ծիւղաւորուածը:

Ուսումնասիրենք մի քանի ծիւղաւորուած ալգորիթմների օրինակներ:

Այս տիպի խնդիրներ (նկ. 58) լուծելու համար նպատակայարմաք է թուային առանցքի վրայ նշել այն միջակայքերը, որտեղ Y -ը հաջուքուած է այս կամ այն բանաձեւով:

$] -\infty, -2]$ միջակայքուած գործում է 2րդ բանաձեւը, $[-2, 2]^*$ առաջինը, իսկ $[2,]^*$ դարձեալ 2րդը:

Այս փոքրիկ վերլուծութիւնը զգալիօրէն պարզեցնուած է ալգորիթմի կառուցուածը, որը հանդում է համեմատասխան միջակայքի որոշմանը համեմատութիւնների միջոցով (3, 4 բլոկներ):

(նկ. 59) ներկայացնուած ալգորիթմում օգտագործելով վերադրման հրահանքը կարողանուած ենք կրճատել համեմատական գործողութիւնների քանակը: Ա փոփոխականով նշանակուած ենք A, B թուերից փոքրը, այնուհետեւ Ս-ն համեմատելով C-ի հետ որոշուած ենք ամենափոքր թիւը, որը եւ արտածուած ենք:


Դիտարկենք յաջորդ խնդիրը (նկ. 60):

Ակքում յիշենք թէ ի՞նչ պայմանների պէտք է բաւարարեն A կէտի X եւ Ս կորդի ի ինատները, որպէսզի այս գտնուի այն քառորդում: Նկարի վրայ այդ յիշեցուած արուած է: Իսկ այժմ մի քանի համեմատութիւնների միջոցով ստուգում ենք նշուած պայմանների եւ գտնուած համապատասխան քառորդը:

Յաջորդ խնդիրը լուծելու համար մենք պէտք է կարողանանք կառուցել գծային եւ քառակուսային ֆունկցիաների գրաֆիկները (նկ. 61):

ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՀԱԾՈՒՅՄԱՆ ՕՐԻՆԱԿ՝ $y = |x|$



$$y = \begin{cases} x, & \text{եթե } x \geq 0, \\ -x, & \text{եթե } x < 0, \end{cases}$$



Խկ. 57


ՏՐՈՒԱԾ X-Ի ՀԱՄԱՐ ՀԱԾՈՒԵԼ ՍՊՈՒՆԿՑԻԱՅԻ ԱՐԺԷՔԸ

$$y = \begin{cases} \sin x^2, & \text{եթե } |x| \leq 2 \\ \cos x^2, & \text{ՀԱԿԱՊԱԿ ԴԵՊՔՈՒՄ} \end{cases}$$




Խկ. 58

ԳՏՆԵԼ a, b, c ԹՈՒԵՐԻՑ ԱՄԵՆԱՓՈքՐԸ



ՈՐՈՇԵԼ ԱՅՆ ՔԱՌՈՐԴԻ ՀԱՄԱՐԸ, ՈՐՏԵղ ԳՏՆԻՌՄ Է $A=(x, y)$ ԿԵՏԸ:



Կառուցելով $y=x^2$ եւ $y=2x+2$ ֆունկցիաների զրաֆիկները առանձնացնում ենք տիրոյթը: Որպէսզի $A(x_0, y_0)$ կէտը գտնուի տիրոյթի ներսում, այն պէտք է լինի $y=2x+2$ ուղղից աջ եւ $y=x^2$ կորից վերեւ, այսինքն միաժամանակ պէտք է բաւարարուեն հետեւեալ երկու պայմանները՝

$$y \leqslant 2x+2 \quad \text{եւ} \quad y_0 \geqslant x_0^2$$

Սուսակելով նշուած պայմանները ալգորիթմը որոշում է պատկանո՞ւմ է արդեօք $A(x_0, y_0)$ կէտը տիրոյթին թէ ոչ:

Վերլուծենք եւս մի ալգորիթմ (*նկ. 62*):

Այս խնդրում ալգորիթմի արդիւնաւէտութիւնը եւ մասսայականութիւնը ապահովելու համար անհրաժեշտ է դիտարկել բոլոր հնարաւոր դէպքերը՝

Եթէ $a=0, b=0, c=0$, ապա ցանկացած թիւ հանդիսանում է արուած հաւասարման լուծում:

Եթէ $a=0, b=0, c \neq 0$, ապա հաւասարումը լուծում չունի:

Եթէ $a=0, b \neq 0$, ապա միակ լուծումն է՝ $x=-c/b$:

Եթէ $a \neq 0$, ապա հաշըրում է քառակուսի հաւասարման զիսկրիմինանտը՝ $D=b^2-4ac$, եթէ $D < 0$ հաւասարումը իրական արմատ չունի, հակառակ դէպրում հաւասարումը ունի երկու արմատ:

Այս վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ a, b, c փոփոխականների ցանկացած արժեքների դէպքում ալգորիթմը բերում է արդիւնքի:

Մեծ հետաքրքրութիւն են առաջացնում նաև երկարաչափական խնդրիների լուծման ալգորիթմները (*նկ. 63*):

5. 4. Ցիկլային ալգորիթմներ

Շատ յաճախ հանդիպում են այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժշտ է կրկնել միեւնոյն դործողութիւնները:

Ցիկլ ասելով հասկանում ենք հրամանների այնպիսի յաջորդականութիւնը, որը արդորիթմի կատարման ընթացքում կրկնում է մի քանի անգամ որեւէ փոփոխականի տարրեր արժեքների համար:

Դիտարկենք հետեւեալ խնդրիը (*նկ. 64*):

Բերուած ալգորիթմում բազմից կրկնում են 4, 5, 6 բլոկերի զործողութիւնները X փոփոխականի տարրեր արժեքների դէպքում: Յատուկ ուշադրութիւն դարձնենք $x=x+h$ վերագրման հրամանին, որի միջոցով է հնարաւոր դառնում ամէն անգամ փոփոխել x -ի արժեքը (տուեալ դէպքում աւելացնել ի քայլով):

Մենք գիտենք, որ ցանկացած ալգորիթմ պէտք է լինի վերջաւոր: Դա նշանակում է, որ գործողութիւնների կրկնութիւնը պէտք է սահմանափակ լինի: Տուեալ դէպքում արգիս սահմանափակում հանդէս է զալիս $x \leqslant b$ պայմանը (τ րդ բլոկ): Այդ արժեքը (b -ն) կոչում է ցիկլի սահման:

Երկնուող գործողութիւնների համախմբութիւնը կազմում է ցիկլի մարմինը: Քիրուած օրինակում դա 5 եւ 6 բլոկերն են:



Փորձենք մատչելի լեզուով նկարագրել բերուած ցիկլով կատարուող գործողութիւնները:


ՏԻՐՈՅԹԸ ՏՐՈՒԱԾ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՒԱՍՍՐՈՒՄՆԵՐՈՎ

$$y=x^2 \quad \text{եւ} \quad y=2x+2$$

ՈՐՈՇԵԼ, ՊԱՏԿԱՆՈՒՄ Է, ԱՐԴԵՕՔ, $A(x_0, y_0)$ ԿԵՏԸ

ՏՈՒԵԱԼ ՏԻՐՈՅԹԻՆ :






Նկ. 62

ՏՐՈՒԱԾ ԵՆ ԵՐԵՔ ԹԻՒ՝ a , b և c , ՈՐՏԵղ, $a \neq 0$ և $b \neq 0$ - ԵՌԱՆԿԵԱՆ
ԿՈՂՄԵՐՆ ԵՆ, ԻՍԿ α - ԻՐԵՆՑ ՄԻՋԵՒ ԵՂԱԾ ԱՆԿԻՒՆԸ:
ՀԱՅՈՒԵԼ՝ ԵԹԷ ԵՌԱՆԿԻՒՆԻՆ ՈՒՂՂՄԱՆԿԻՒՆ Է - ՆՐԱ ՆԵՐՔԵՍՁԻԳԸ
ԵԹԷ ՈՉ - ՄԱԿԵՐԵՍԸ :


ԼՈՒՇՈՒՄ : ՀԱՅՐԱԿՈՐ Է ԵՐԵՔ ԴԵՊՔ

1. $\alpha = \frac{\pi}{2}$
2. $\frac{a}{b} = \cos \alpha$
3. $\frac{b}{a} = \cos \alpha$

$$S = \frac{1}{2} ab \cdot \sin \alpha$$



Նկ. 63



Հ ղեկավարող փոփոխականի իւրաքանչիւր արժեքի դէպքում (x -ը փոխում է ձևականին արժեքից մինչեւ Ե վերջնական արժեքը ի քայլով) կատարել հետեւեալ գործողութիւնները՝

1. Հաշուել $f(x)$ փունկցիայի արժեքը Ե վերագրել Ս փոփոխականին.

2. Արտածել x Ե Ս փոփոխականների արժեքները:

Իսկ ինչպէ՞ս հաշուել քանի անգամ է կատարում ցիկլի մարմինը։ Դրա համար կարելի է օդտագործել հետեւեալ պարզ բանաձիւր՝

$$n = [(b-a)/h] + 1$$

որտեղ $[y]$ -ով նշանակուած է Ս-ի ամբողջ մասը։

Լուծենք յաջորդ խնդիրը (նկ. 65):

Առաջարկում ենք ինքնուրոյն առանձնացնել այն գործողութիւնները, որոնք կազմում են ցիկլի մարմինը և հաշուել քանի անդամ են նրանք կրկնուում։

Հիմա տեսնենք թէ ինչպիսի ցիկլը են կազմում գումարներ եւ արտադրեալներ հաշուելու համար (նկ. 66):

Այս խնդրում պահանջուում է հաշուել 1-ից մինչեւ Ա ընտական թուերի քառակուսիների գումարը։ Ցիկլը կաղմակերպելուց առաջ Տ փոփոխականը պէտք է ընդունի 0 արժեքը, որպէսզի հնարքուր լինի կրկնուուղ դործուութիւնների միջացով կուտակի (y = y + 1²) նշուած մեծութիւնների գումարը։ Ցիկլի փոփոխականը 1-ն է, որի արժեքը փոփուում է 1-ից մինչեւ Ա 1-քայլով։ Ցիկլի մարմինը կազմում է 5 բղդ բլոկ, որտեղ հաշուելում է ճերթական բնական թուի քառակուսին եւ գումարուում ընդհանուրին։

Մենք ցոյց ենք տուել ցիկլի նկարագրման երկու եղանակ՝

1. Օգտագործելով պայմանի ստուգման բլոկը ($1 < n$).

2. Օգտագործելով ցիկլի բլոկը ($1 = I, n$):

Ցիկլի մարմինը կատարուում է Ո անգամ։ Երբ 1-ն ընդունում է $n+1$ արժեքը ցիկլը աւարտուում է Ե եւ կատարուում է Յրդ լրոկի գործողութիւնը (սպառում է արդիւնքը՝ Ս փոփոխականի արժեքը)։

Նման ցիկլ կարելի է կաղմակերպել նաև արտադրեալ հաշուելու համար (նկ. 67)։


Ցիկլեցնենք, որ Ո Փակտուրեալը իւրենից ներկայացնուում է 3-ից մինչեւ Ա ընտական թուերի արտադրեալը։ Ի տարրերութիւննախորդ ալգորիթմի այսաեղ Ս փոփոխականի պղբնական արժեքը հաւասար է 1-ի, իսկ ցիկլի կազմակերպումը նոյնն է։

Այժմ դիտարկենք աւելի բարդ ալգորիթմ, որտեղ ցիկլի մարմինը պարունակուում է պայմանի ստուգման գործողութիւնը (նկ. 68)։

Տ եւ Կ փոփոխականներին վիելագրուում է 0 սկզբնական արժեքը Ե եւ կաղմակերպուում է ցիկլ ըստ Խ ղեկավարսղ փոփոխականի, որը փոխուում է ա-ից Ե ի քայլով։ Խ-ի ամէն մի արժեքի համար հաշուելում է $y = \sin \cos x$ Ե համեմատուում 0-ի հետ։ Եթէ Ս-ի արժեքը դրական է, ապա Տ-ը Ե Կ-ն ստանուում են համապատասխան աճ։


Դիտարկենք յաջորդ խնդիրը (նկ. 69)։

Նկատենք որ արդարիթմուում չի օգտագործուած աստիճան բարձրացման գործողութիւնը, որը փոփորինուած է ցիկլի մէջ արտադրեալով (Յրդ բլոկ)։




ՀԱՅՈՒՆԵԼ [0 ; 5] ՀԱՏՈՒԱԾԻ ՎՐԱՑ $\Delta x = h$ ՔԱՅԼՈՎ ՀԵՏԵՒԵԱԼ
ՖՈՒՆԿԻԱՑԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ :

$$y = \begin{cases} 2x^2 + x + 1, & \text{եթե } 0 \leq x \leq 2, \\ \sqrt{x^2 - 2}, & \text{եթե } 2 < x \leq 5 : \end{cases}$$



Նկ. 65


$$\text{ՀԱՅՈՒՆԵԼ ԳՈՒՄԱՐԸ } y = \sum_{i=1}^n i^2 = 0 + 1^2 + 2^2 + \dots + n^2$$



Նկ. 66


ՀԱՇՈՒԵԼ $y = n!$

$$y = 1 \cdot 2 \cdot \dots \cdot n = \prod_{i=1}^n i$$



Խկ. 67

ՓՈՓՈԽԵԼՈՎ, ԽԱՐԳՈՒՄԵՆՏԻ ԱՐԺԵՔԸ Ի ՔԱՅԼՈՎ [a ; b] ՀԱՏՈՒԱԾԻ
ՎՐԱՅ, ՀԱՇՈՒԵԼ $y = \sin \cos x$ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԴՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ԳՈՒՄԱՐԸ (s) ԵՒ ԱՅԴ ԿԵՏԵՐԻ ՔԱՆԱԿԸ (k) :



Խկ. 68

(Նկ. 70) բերուած ալգորիթմում հետաքրքրութիւն է առաջացնում $(-1)^k$ հաշուարկը, որը կատարում է նոր փոփոխականի (z) ներածման միջոցով: և զեկավարող փոփոխականի կէնտ արժէքների դէպքում $z = -1$, իսկ ցոյդ արժէքների դէպքում $z = 1$:

Ցիկլերը կարող են ներդրուած լինել մէկը միւսի մէջ:

Դիտարկենք խնդիր, որի լուծման ալգորիթմը պարունակում է ներդրուած ցիկլեր (Նկ. 71):

Այս ալգորիթմը կազմելիս մենք օգտագործել ենք ներքին եւ արտաքին ցիկլերը: Ներքին ցիկլի ղեկավարող փոփոխականը՝ j-է, իսկ արտաքին ցիկլինը՝ k-ն: Կառւեր է նշել, որ արտաքին ցիկլի ղեկավարող փոփոխականի ամէն մի արժէքի դէպքում ներքին ցիկլը լրիւ կատարւում է: Այսինքն ցիկլի մարմինը կազմող գործողութիւնը (Երդ բլոկ) կրկնում է տուեալ դէպքում ու ո անգամ:

Հարցեր եւ վարժութիւններ

1. Ո՞ր ալգորիթմներն են կոչում գծային:
2. Բերէք գծային ալգորիթմների օրինակներ:
3. Տրուած x-ի համար հաշուել Y ֆունկցիայի արժեքը՝

$$y = \begin{cases} 2x^2 + 3x - 1 & , \text{ եթե } -1 \leq x \leq 2 \\ 3^{x+1} & , \text{ եթե } 5 < x \leq 8 \\ 1 & , \text{ մնացած դէպքերում} \end{cases}$$

4. Տիրոյթը հարթութեան վրայ տրուած է հետեւեալ հաւասարումներով:

$$x=0, y=5=x \text{ եւ } y=x^3$$

Որոշել պատկանո՞ւմ է արդեօֆ, A(X, Y) կէտը տուեալ տիրոյթին:


5. Եռանկիւնը հարթութեան վրայ տրուած է իր A, B, C գագաքների կորդինատներով: Որոշել գտնենո՞ւմ է տրուած D (X, Y) կէտը այդ եռանկիւն ներսում, քէ ոչ!

6. Հաշուել եւ տպագրել [1, 8] հատուածի վրայ և քայլով հետեւեալ ֆունկցիայի արժեքները:


$$y = \begin{cases} \sqrt{x^2 + a^2} & , \text{ եթե } 1 \leq x < 2,5 \\ \operatorname{tg} x & , \text{ եթե } 2,5 \leq x \leq 4 \\ \sin \cos x & , \text{ եթե } 6 \leq x \leq 8 \end{cases}$$

ՀԱՇՈՒԵԼ $y = \sum_{n=1}^m 2^n$

$$2^{n+1} = 2^n \cdot 2$$




ՀԱՅՈՒԹԵԼ $y = \sum_{k=1}^n (-1)^k \frac{k^2+2}{5}$



ՀԱՅՈՒԹԵԼ ԿՐԿՆԱԿԻ ԳՈՒՄԱՐԸ

$$S = \sum_{i=1}^n \sum_{j=1}^m i j$$



7. Տրուած է ո թնական քիւը: Հաշուել
 $y=1 \cdot 2 + 2 = 4 + \dots + n(n+1) \dots 2n$

8. Որոշել $Y=f(x)$ ֆունկցիայի ամենամեծ արժեքը $[a, b]$ միջակայքում փոփոխելով x -ը ի քայլով:

9. Հաշուել գումարների արտադրեալ՝

$$Y = \prod_{j=1}^n (1 + j^2)$$

10. Հաշուել այն եռամբիշ քուերի քանակը որոնց քուանչամեների գումարը հաւասար է տրուած M թնական քուին:

11. Գտնել այն բոլոր երկնիշ քուերը, որոնց քուանչամեների գումարը բաժանում է 13ի:

12. Գտնել այն բոլոր եռամբիշ քուերը, որոնք հաւասար են իրենց քուանչամեների խորանարդների գումարին:

13. 1022 քուին ազից ու ճախից կցագրել մէկական քուանչան այնպէս, որ ստացուած վեցամիշ քիւը բաժանուի 7ի, 8ի և 9ի:

14. Գտնել տրուած N -ին չգերազանցող բոլոր պարզ քուերը:

15. Թիւր կոչում է կատարեալ, եթէ այն հաւասար է իր բոլոր բաժանարարների (բացի իրենից) գումարին: Գտնել տրուած M թնական քուին չգերազանցող բոլոր կատարեալ քուերը:

5. 5. Զանգուածների մշակման ալգորիթմներ

Նատ յաճախ են հանդիպում այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար հարկ է լինում գործողութիւններ կատարել մեծ քանակութեամբ նոյնատիպ տուեալների նկատմամբ: Նման դէպում նպաստակայարմար է մշակաւոր ինֆորմացիան ներկայացնել գծային կամ ուղղանկիւն աղիւսակների տեսքով:

Իսկ ի՞նչ է նշանակում մշակել աղիւսակը:

Կախուած խնդրի պայմաններից անհրաժեշտ է լինում որոշակի տարր, դեռեւ նոր տարրեր, փոխել տարրերի յաջորդականութիւնը եւ այլն: Իսկ ի՞նչպէ՞ս կարելի է կազմել աղիւսակը, որպէսզի յարմար լինի նրա մշակումը: Նպաստակայարմար է մէկ անուան տակ ձեւակերպել (նկարագրել) տուեալների ամբողջ խումբը, նրա իւրաքանչիւր տարրին համապատասխանեցնելով մէկ կամ երկու կարգահամարներ (ինդեքսներ) այնպէս, որ բոլոր տարրերն ունենան նոյն քանակութեան կարգահամարներ, որոնցով միարժեքօրէն որոշում է տուեալ տարրի համարը այդ

աղիւսակում: Դրա չնորհիւ հնարաւորութիւն ենք ստանում ցանկացած տարր առանձին գիտարկելու:

Դիտարկենք հետեւեալ խնդիրը (նկ. 74):

Մենք արդէն ծանօթ ենք գումարը կամ արտադրեալը հաշուելու ալգորիթմներին: Փոփոխելով 1 ինդեքսը 1ից մինչեւ ո կազմում ենք ցիկլ, որի միջոցով հնարաւոր է գառնում կուտակել վեկտորի բաղադրիչների գումարը ((ա) ալգորիթմում) կամ արտադրեալը ((բ) ալգորիթմում):

Մանրամասն վերլուծենք (նկ. 75) առաջարկուած երկու ալգորիթմների աշխատանքը: Առաջին ալգորիթմում բացի 1 փոփոխականից, որը համապատասխանում է վեկտորի դիտարկուող բաղադրիչից կարգահամարին օգտագործուած են եւս երկու փոփոխականներ՝

Ե-արդէն համեմատուած բաղադրիչներից ամենամեծը.

Կ-արդէն համեմատուած բաղադրիչներից ամենամեծի համարը:

Ծիկլ կազմակերպելուց առաջ կ եւ կ փոփոխականներին վերացրում ենք առաջին բաղադրիչից արժեքը եւ համարը: Համեմատութիւնները սկսում ենք երկրորդ բաղադրիչից մինչեւ ո-դզը: Եթէ պարզուեց, որ յ փոփոխականի արժեքն աւելի փոքր է, քան հերթական ան բաղադրիչից արժեքը (Երդ բլոկ), ապա յ փոփոխականին վերագրուում է ա բաղադրիչից արժեքը, իսկ կ փոփոխականին՝ նրա Յ կարգահամարի արժեքը: Ալգորիթմի աշխատանքն աւարտուում է, եթէ զիտարկուած են վեկտորի բոլոր տարրերը եւ գտնուած է նրանցից ամենամեծը:

Այս խնդրի լուծման երկրորդ ալգորիթմը (բ) առաջարկում ենք վերլուծել ինքնուրոյն:

Այժմ դիտարկենք վեկտորի կարգաւորման խնդիրը, որը յանախակի է հանդիպում տարրեր քոմիտերային համակարգերի աշխատանքում: Վեկտորի կարգաւորման համար կարելի է առաջարկել բաղմաթիւ ալգորիթմներ: Դիտարկենք, օրինակ, հետեւեալը (նկ. 76):

Խնդիքս երեւում է բերուած ալգորիթմից, կազմուած են նիրուուած ցիկլեր: Ներքին ցիկլում (5-7 բլոկեր) յաջորդաբար դիտարկուում են լույս տարրերը եւ գտնուում է ամենամեծ արժեքն ունեցող տարրը: Այդ ալգորիթմին մենք արդէն ծանօթ ենք: Գտնուած տարրը փոխատեղաւում է առաջինի հետ (Երդ բլոկ), որի հետեւանքով առաջին տեղուում է ամենամեծ արժեք ունեցող տարրը:

Մենք նկարագրենք արտաքին ցիկլի առաջին կատարումը $k=1$ դէպօւմ: $k=1$ դէպօւմ նորից աշխատում է ներքին ցիկլը, դիտարկուում են աղիւսակի բոլոր տարրերը, սկսած երկրորդից եւ նրանց մէջ գտնուում է ամենամեծ արժեքը ունեցողը (Երկրորդ մաքսիմում), որը փոխատեղաւում է երկրորդ տարրի հետ: Նոյն ձեւով արտաքին ցիկլի կատարումը շարունակուում է մինչեւ կ-ի վերջնական արժեքը (ն-1): Այդ դէպօւմ ներքին ցիկլում համեմատուում են միայն նախակերպին եւ վերջին տարրերը: Անհրաժեշտութեան դէպօւմ նրանք փոխատեղաւուց յետոյ կարգաւորումը աւարտուում է:

Ուշագործիւն գարձնենք 8րդ բլոկում ընդգրկուած գործողութիւնների վրայ, որոնց միջոցով իրագործուում է վեկտորի երկու տարրերի արժեքների փոխատեղումը: $a_k=a_1$ վերագրումը կատարելուց առաջ անհրաժեշտ է յիշել Կ-րդ տարրի

ԶԱՆԳՈՒԱԾԲ ՄԻԵՒՆՈՅՆ ԱՆՈՒՆՈՎ, ԲԱ.ՅՅ ՏԱՐՐԵՐԸ ԻՆԴԵՔՍՆԵՐՈՎ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ ՀԱՄԱՍԵՐ ՏԱՐՐԵՐԻ ԿԱՐԳԱԿՈՐՈՒԱԾ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ Է:

ՕՐԻՆԱԿ՝

$$1) \quad \begin{matrix} 5 & 3,5 & 0 & 125,4 & -7,15 \\ X_1 & X_2 & X_3 & X_4 & X_5 \end{matrix}$$

. | □ ○ △ △ ◇

$$2) \quad a \ a_2 \ a_3 \ a_4 \ a_5 \ a_6 \ a_7$$

$$3) \quad \left(\begin{array}{ccccc} 1 & 2,3 & -0,52 & 1 & 1 \\ 2,1 & 5 & 6,32 & 0 & X_{11} \\ -3 & 1 & -77 & 2,2 & X_{12} \\ \end{array} \right) \rightarrow \left(\begin{array}{cccc} X_{11} & X_{12} & X_{13} & X_{14} \\ X_{21} & X_{22} & X_{23} & X_{24} \\ X_{31} & X_{32} & X_{33} & X_{34} \end{array} \right)$$

ՏՈՂԻ ՀԱՄԱՐԸ ՍԵՍՆ ՀԱՄԱՐԸ

Նկ. 72

ԶԱՆԳՈՒԱԾԻ ՀԱՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇՆՈՒՄ Է ԻՐ ՏԱՐՐԻՆ ԿԻՑ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՔԱՆԱԿՈՎ.

ՕՐԻՆԱԿ՝

$$1) \quad X(x_1, x_2, \dots, x_n)$$

ՄԻՉԱՓԱՆԻ ԶԱՆԳՈՒԱԾ Է, ՈՐԸ ԱՅԼ ԿԵՐՊ

ԱՆՈՒԱՆՈՒՄ ԵՆ ՎԵԿՏՈՐ:


$$2) \quad A = \begin{pmatrix} a_{11} & a_{12} & \dots & a_{1m} \\ a_{21} & a_{22} & \dots & a_{2m} \\ \dots & \dots & \dots & \dots \\ a_{n1} & a_{n2} & \dots & a_{nm} \end{pmatrix}$$

ԵՐԿՉԱՓԱՆԻ ԶԱՆԳՈՒԱԾ Է, ԿԱՄ ՄԱՏՐԻՑԱ:

ՄԱՏՐԻՑԱՆ ԿԱՐԵԼԻ Է ՆՇԱՆԱԿԵԼ ՆԱԵՒ ԱՅՍՊԻՍ.


$$A = \|a_{ij}\|, \quad i = \overline{1, n}; \quad j = \overline{1, m}:$$

ՀԱՅՈՒԵԼ $X(x_1, x_2, \dots, x_n)$ ՎԵԿՏՈՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ ԵՒ ԱՐՏԱԴՐԵԱԾ:



նկ. 74

ՈՐՈՇԵԼ $A(a_1, a_2, \dots, a_n)$ ՎԵԿՏՈՐԻ ԱՄԵՆԱՄԵՇ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐԸ ԵՒ ԱՐԺԵՔԸ:




նկ. 75

ԿԱՐԳԱԽՈՐԵԼ $A(a_1, a_2, \dots, a_n)$ ՎԵԿՏՈՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԸՍՏ
ՆՈՒԱԶՄԱՆ:

I ԵՂԱՆԱԿ

Ա) $a_1, a_2, \dots, a_i, \dots, a_k, \dots, a_n$

ԱՌԱՋԻՆ
max ԵՐԿՐՈՐԴ
max ԱՄԵՆԱՓՈքՐ
թիվը



Նկ. 76

"Հին" արժէքը, որպէսզի այն "չկորչի": Դա կատարւում է $x=a_k$ վերագրման միջոցով: Իսկ $a_i=x$ գործողութիւնը առահօգուում է $a_k=x$ "հին" արժէքի վերագրումը a_i փոփոխականին:

Ներկայացնենք նաև այս խնդրի լուծման երկրորդ ալգորիթմը, որի մանրամասն վերլուծութիւնը առաջարկում ենք կատարել ինքնուրոյն (նկ. 77):

Նշենք, որ օ փոփոխականը (*յայտանիշը*) նախատեսուած է ներքին ցիկլի աւարտից յետոյ վեկտորի տարրերի կարգաբարուածութիւնը ստուգելու համար (8րդ րոկ): Եթէ $p=0$, ապա կարգաւորումը աւարտած է, հակառակ դէպում ցիկլը (4-7 բլոկեր) պէտք է կատարուի նորից: Բացատրէք ինչու:

Դիմարկենք յաջորդ խնդրը (նկ. 78):

Այստեղ յ փոփոխականը նախատեսուած է ստացուող յ վեկտորի հերթական կարգամարը հաշուելու համար: Ցիկլի մէջ յաջորդաբար զիտարկւում են x վեկտորի բոլոր տարրերը: Զրոյի հաւասար տարրերը անտեսում են (5րդ րոկ), իսկ միւսները զրանցում են յ աղիւսակում, ստանալով հերթական կարգահամարը (6րդ, 7րդ րոկ):

(նկ. 79) բերուած ալգորիթմը վերլուծենք ինքնուրոյն:

Ինչի՞ համար է նախատեսուած յ փոփոխականը եւ ի՞նչ արժէքներ է այն ընդունում ցիկլի կատարման ընթացքում:

Այժմ դիմարկենք մատրիցների (ուղղանկիւն աղիւսակ) մշակման խնդիրներ (նկ. 80):

Սկսենք նրանից, որ մատրիցի տարրերը ներածելուց առաջ անհրաժեշտ է ներածել նրա տողերի (ո) եւ սիլուների (ո) քանակը (2րդ րոկ):


Նախապէս վերագրելով $s=0$ (գումարի հաշւման ժամանակ) կամ $p=1$ (արտադրեալ ալգորիթմ) կազմակերպում ենք ներդրուած ցիկլեր: Դա թոյլ է տախիս ընդհանուր գումարը կամ արտադրեալը կուտակելիս ընդգրկել մատրիցի բոլոր տարրերը: Արտաքին եւ ներքին ցիկլերի դեկապրոց փոփոխականների ընտրութիւնը կախուած է խնդրի պայմաններից: Սասնաւորապէս, գումարը պահանջում է հաշուել տող եւ համապատասխան ալգորիթմը պարունակում է արտաքին ցիկլ ըստ յ փոփոխականի, որը ֆիկսում է մատրիցի տողը: Ներքին ցիկլի աշխատելու ժամանակ փոփոխելով յ կարգահամարը ստանում ենք 1րդ տողի բոլոր տարրերը:

(նկ. 81) բերուած ալգորիթմը վերլուծենք ինքնուրոյն: Համեմատէք վեկտորի տարրերի կարգաբարման ալգորիթմի հետ:

Հարցեր եւ վարժութիւններ.


1. Ինչի՞ համար են կազմւում ինֆորմացիոն զանգուածները:
2. Բերէք գծային աղիւսակների (վեկտորների) օրինակներ:
3. Բերէք ուղղանկիւն աղիւսակների օրինակներ:

Եղանակ (ՊՂՊՁԱԿԱԽՈՐ ՄԵԹՈԴ)




Նկ. 77

ՏՐՈՒԱԾ $X(x_1, x_2, \dots, x_n)$ ՎԵԿՏՈՐԻՑ ՀԵԹԱՑՆԱԼ ԶՐՈԱԿԱՆ ԲԱ-
ՂԱԴՐԻՑՆԵՐԸ:




Նկ. 78

ԿԱՌՈՒՑԵԼ $C(c_1, c_2, \dots, c_n)$ ՎԵԿՏՈՐԸ, ՈՐԻ ԲԱՂԱԴՐԻՉԵՐԸ ՍՏԱՑ-
ԻՈՒՄ ԵՆ ՏՐՈՒԱԾ $A(a_1, \dots, a_n)$ և $B(b_1, \dots, b_n)$ ՎԵԿՏՈՐՆԵՐԻ ԲԱ-
ՂԱԴՐԻՉԵՐԻՑ ՅԱԶՈՐԴԱՀԱՎԱՅ:



ՀԱՅՈՒԹԵԼ $X = |x_{ij}| ; i=1, n; j=1, m$ ՄԱՏՐԻՑԱՅԻ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ S ԳՈՒՄԱՐԸ (ՏՈՂ ԱՄ-
ՏՈՂ) ԽԱՐՍԱԳՐԵԱԱՐ (ՄԻՒՆ ԱՅ ՄԻՒՆ):

$$u) S = \sum_{i=1}^n \sum_{j=1}^m x_{ij}$$



4. Հաշուել $A(a_1, a_2, \dots, a_n)$ եւ $B(b_1, b_2, \dots, b_m)$

Վեկտորների սկալար արտադրեալը՝

$$y = \sum_{i=1}^n a_i b_i$$

5. Հաշուել $X = \prod a_{ij}$; $i=1, n$; $j=1, m$ մատրիցի դրական, բացասական եւ զրոական տարրերի քանակը:

6. Հաշուել $x = \prod a_{ij}$; $i=1, n$; $j=1, m$ մատրիցի գլխաւոր անկիւնագծից մերժել գողուող տարրերից ամենամեծը: Ցիշեցմենք, որ տրուած մատրիցի գլխաւոր անկիւնագծի տարրերն են $a_{11}, a_{22}, \dots, a_{nn}$:

7. Փոխատեղել $A = \prod a_{ij}$, $i=1, n$; $j=1, m$ մատրիցի k -րդ եւ l -րդ տողերը:

8. Տրուած է ո ամբողջ թիւը: Կառուցել A վեկտորը հետեւեալ բաղադրիչներով՝ $n, n(n-1), n(n-1)(n-2), \dots, n!$

9. Տրուած է ո ամբողջ թիւը: Կառուցել $(n \times n)$ կարգի B մատրիցը հետեւեալ բաղադրիչներով՝

$$\begin{pmatrix} 1 & 1 & 1 & \dots & 1 \\ 0 & 2 & 2 & \dots & 2 \\ 0 & 0 & 3 & \dots & 3 \\ \dots & \dots & \dots & \dots & \dots \\ 0 & 0 & 0 & \dots & n \end{pmatrix}$$

10. Տրուած է $A = \prod a_{ij}$, $i=1, n$; $j=1, m$ մատրիցը: Կառուցել $B(b_1, b_2, \dots, b_k)$ վեկտորը, որտեղ.

$$\text{ա) } b_i = \sum_{j=1}^m a_{ij}; \quad i=1, n$$

$$\text{բ) } b_i = \max(a_{ij}); \quad i=1, n; j=1, m$$


գ) b_j հաւասար է A մատրիցի j -րդ սեան դրական տարրերի քանակին:

11. Գտնել $X(x_1, x_2, \dots, x_n)$ վեկտորի դրական տարրերից ամենափոքը:

12. Գտնել $Y(y_1, y_2, \dots, y_m)$ վեկտորի բացասական տարրերից ամենամեծը:

13. Տրուած են K բնական թիւը եւ $X(x_1, x_2, \dots, x_n)$ վեկտորը, որի տարրերը բնական թուեր են: Կառուցել $Y(y_1, y_2, \dots, y_m)$ վեկտորը, որտեղ y_i -ն հաւասար է $k-i$ եւ x_i -ի ամենափոքք ընդհանուր բազմապատճիկին:

ԿԱՐԳԱԽՈՐԵԼ $A = |a_{ij}|$; $i=1, n$; $j=1, m$: ՄԱՏՐԻՑԱՅԻ ՏՈՂԵՐԸ ԸՍՏ
I-րդ ՄԵԱՆ ԷԼԷՄԵՆՏՆԵՐԻ ԱՃՄԱՆ:



14. Բնական M թիւը սրուած է իր երկուական Ալշերի $A(a_0, a_1, \dots, a_n)$ գծային աղիւսակի տեսմով.

$$M = a_n \cdot 2^n + a_{n-1} \cdot 2^{n-1} + \dots + a_1 \cdot 2 + a_0, \text{ որտեղ}$$

$$a_i = 0 \text{ կամ } a_i = 1 \quad (i=0, 1, \dots, n):$$

Սուանալ $M+1$ թուի երկուական Ալշերի Յ աղիւսակը:

15. Ներածել $X(x_1, x_2, \dots, x_m)$ իրական բուերի աղիւսակը: Արտածել $Y(y_1, y_2, \dots, y_s)$ գծային աղիւսակը, որը ստացւում է X աղիւսակից՝ նրա ամենամեծ տարրը հանելով:

6. ՔՈՄՓԻԿԹԵՐՆԵՐԻ ՄՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋՐԱՎԱՐՈՒՄԸ

6. 1. Բարձր մակարդակի ծրագրաւորման լեզուներ

Մենք արգեն զիտենք, որ ծրագրաւորման լեզուն հանդիսանում է ալգորիթմի ներկայացման այն եղանակը, որն իրաղործեում է հաշուիչ մեքենայի կողմից: Ցանկացած էջՄ-ի աշխատանքը կայանում է ծրագրի կառարման մէջ: Խսկ ծրագիրը իրենից ներկայացնում է մեքենայական հրամանների համախմբութիւն, որոնք տեղաւորում են էջՄ-ի յիշողութիւնն մէջ: Հետեւարար, հաշուիչ մեքենայի հետ համագործակցելու համար անհրաժեշտ է ուսումնասիրի նրա հրամանների լեզուն կամ ընտրել որեւէ լեզու՝ միջնորդ՝ հասկանալի հետ էջՄ-ի եւ մարգար կողմից:

Մեքենայական հրամանները լրենցից ներկայացնում են 0 եւ 1 թուանշաններից կազմուած երկուական թուերի յաջորդականութիւններ: Եթէ ծրագիրը ծաւալուն է, ապա նրա զրաւումը մեքենայական լեզուով չափազանց ծանր է եւ ճանճրապի: Այդ պատճառով էլ լայն տարածում են ստացել այսպէս կոչուած ալգորիթմական ծրագրաւորման լեզուները, որոնց օգտագործումը աւելի հեշտ է ընական է զարգնում ծրագրաւորման պրոցեսում:

Հաշուիչ մեքենաները օժտուած են յատուկ թարգմանիչներով (ծրագրերով), որոնք թարգմանում են այս կամ այն ալգորիթմական լեզուով զրուած ծրագիրը մեքենայականի: Այդ թարգմանիչը ծրագրելու լինում են երկու տիպի՝ կոմպիլատորներ և ինտերպրետատորներ:

Կոմպիլատորը կարգում է ծրագրաւորման լեզուով զրուած տեքստը սկզբից մինչեւ գերջ, կազմելով համարժեք ծրագիր՝ մեքենայական լեզուով, որը հետագայում եւ օգտագործում է հաշուարկների համար: Այդպիսի ծրագրերում թեկու մէկ նշանի փոփոխութիւն կատարելու անհրաժեշտութեան զէպքում ստիպուած ենք լինում ամուղջ ծրագիրը նորից թարգմանել կոմպիլատորի միջոցով: Դա, ի հարկէ, որոշ անյարմարութիւն է առաջացնում ծրագրի ճշգրտման պրոցեսում:

Ինտերպրետատորը կարգում է ծրագիրը մաս մաս, անմիջապէս թարգմանելով եւ կատարելով համապատասխան գործողութիւնները: Այս զէպքում, անկասկած, աւելի յարմար է զաւուած ծրագրի ճշգրտումը, սակայն նուազում է խոնդիր լուծման արտգութիւնը, քանի որ ցիկլերի կատարման ժամանակ կրկնուող հրամանները բազմաթիւ անվամ թարգմանում են:

Ինչպէս անսնում ենք, եւ կոմպիլատորները եւ ինտերպրետատորները ունեն իրենց առանձիւթիւններն ու թերութիւնները: Նշենք, որ երկխօսային լեզուների համար, որոնց թուին են պատկանում օրինակ բէյսիկը, Բապիրան, սովորաբար կազմում են ինտերպրետատորներ, խսկ ֆորտրանի, Ալգորի, Պասկալի համար՝ կոմպիլատորներ:

Ամենապարզ թարգմանիչ ծրագիրը՝ ասկեմբլերն է: Այն ձեւափոխում է այսպէս կոչուած ասեմբլերի լեզուով գրուած ծրագիրը մեքենայական լեզուի: Գործնականօրէն ասեմբլերի լեզուի ցանկացած հրաման ունի իրեն համապատասխանը մեքենայական լեզուում: Սահմանակի հրամաններում երկուական կողերի փոխարէն օգտագործուած են գործողութիւնների կրճատ անուանումները, իսկ յիշողութեան հասցէները ներկայացուում են ծրագրաւորողին յարմար սիմպոլիկ անուններով:

Իսկ ի՞նչ է նշանակում բարձր մակարդակի ծրագրաւորման լեզուներ: Այդ լեզուները յարմար եւ մատչելի լինելով ծրագրաւորողի համար, միաժամանակ բարդ են էջՄ-ի տեսակիտից (այստեղից է գալիս “բարձր մակարդակ” անուանումը), քանի որ նրանցից մեքենայական լեզուին անցնելու համար պահանջւում են լրացուցիչ ծրագրային միջոցներ:

Տարածուած բարձր մակարդակի ծրագրաւորման լեզուներից մէկը Ֆորտրանն է, որը ստեղծուել է 1954 թուականին Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Ծրագրաւորման այս լեզուն ստեղծողները նախատեսել էին այն գիտական եւ տիեսնիկական հաշուարկներ կատարելու համար: Դրա հետ է կապուած Ֆորտրան բառի ծագումը՝ FORmula TRANslation (բանաձեւերի թարգմանութիւն) արտայայտութեան յապաւումը: 60ական, 70ական թուականներին Ֆորտրանը իր զանազան տարրերակներով (Ֆորտրան-II, Ֆորտրան-IV, Ֆորտրան-77 եւ այլն) համարում էր ամենատարածուած ծրագրաւորման լեզուն:

Հարկ է նշել նաեւ Ալգորիթմուն (ALGORITMIC LANGUAGE - ալգորիթմական լեզու), որը ստեղծուել է 1960 թուականին եւ մեծ տարածում գտել:

Ալգորիթման վրայ է ստեղծուել Պասկալ ծրագրաւորման լեզուն (յայտնի գիտնական Բէզ Պասկալի պատուին) 1970 թուականին Յիւրիիսում (Զուիցերիա) պրոֆեսոր Նիկառու Վիրտի կողմից: Պասկալ լեզուն շատ յարմար է ինֆորմացիոն-որոնողական համակարգերի նախագծման համար:

Վերջին տարիներին լայն տարածում գտաւ ծրագրաւորման Սի լեզուն, որը հզօր գործիք է հանդիսանում տարրեր ոլորտների քոմֆիւթերային համակարգեր ստեղծող ծրագրաւորողների համար: Սի լեզուով է, օրինակ, գրուած UNIX օպերացիոն համակարգի ծրագրերի մեծամասնութիւնը: Միւս կողմից Սի-ն լայնօրէն կիրառում են քոմփիւթերային մուլտիպլիկացիոն ֆիլմերի ստեղծման համար: Սի լեզուն ստեղծել է 1972 թուականին ամերիկացի Դեննիս Ռիթչին:

Ներկայում լայն կիրառութիւն են գտել ծրագրաւորման տասնեակ լեզուներ, օրինակ Բեյսիկ, Ֆորտրան, Քորլ, Ալգա, Պրոլոգ, Լիսպ, Սի եւ այլն, իսկ լեզուների ընդհանուր քանակը մի քանի հազար է:

6. 2. Ծրագրաւորման Բեյսիկ լեզուն

BASIC

«BEGINNER'S ALL PURPOSE SYMBOLIC INSTRUCTION CODE»

ՍԿՍՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ ՍԻՄՊՈԼԻԿ ՀՐԱՄԱՆԳՆԵՐԻ ԲԱԶԱՆՊԱՏԱԿ ԼԵԶՈՒ

Ստեղծուել է 1965 թուականին յայտնի մաթեմատիկոս Ճոն Քեմենիրի կողմից:

Բեյսիկը իրաւացիօրէն համարւում է ամենատարածուած եւ մատչելի ծրագրաւորման լեզուն, որը նախատեսուած է մարդու եւ հաշուիչ մեքենայի միջեւ երկխօսութիւն կազմակերպելու համար:

Իրօք, Բեյսիկ լեզուն նախատեսուած էր սկսնակների համար, սակայն լայն տարածում գտաւ չնորհիւ իր պարզութեանը եւ մատչելիութեանը: Այսօր Բեյսիկը ինտերապետասորներ գոյութիւն ունեն զրեթէ բոլոր մինի եւ միկրո մեքենաները համար: Կարելի է նշել Բեյսիկ լեզուի չուրչ 50 զանագան տարրերակ, որոնք ընդունել են միւս ալգորիթմական լեզուներից վերցուած բազմաթիւ ծրագրաւորման էֆեկտիւ միջոցներ (օրինակ՝ Բեյսիկ-80, Բեյսիկ-Ալգաթ, Բեյսիկ-Իղոտ, MSX-BASIC, BASICA եւ այլն): Այսպիսով, մենք ունենք հիմա ոչ թէ մի Բեյսիկ լեզու այլ՝ այդ անունով կոչուող միահարար երկխօսային լեզուների մի ամենող լսումք:

Այդ պատճառով էլ յաջորդ բաժիններում նկարագրուած է Բեյսիկ լեզուն, որի ուսումնասիրումը թույլ կու տայ ձեզ անկացկան չփուել ցանկացած մակնիշի էջՄ-ի հետ, կատարելով անհրաժեշտ հաշուարկները: Մենք ընարելի ենք BASICA ընդլայս նուած տարրերակը, որը ընձեռնում է մեծ հնարաւորութիւններ եւ ընդունուած է IBM PC, EC-1841, Պրավեց եւ այլ ժամանակակից մեքենաների վրայ:

Ինչպէս արդէն նշուել է, ինտերապետատորը ծառայում է Բեյսիկ լեզուով զրուած ծրագրի հրահանգների թարգմանման եւ կատարման համար: Այն կարող է աշխատել երկու ոեժիմով՝ անմիջական եւ ծրագրային: Անմիջական ոեժիմում ինտերապետատորը կատարում է առանձին հրահանգներ, որոնք արտուի են առանց համարակալման ի տարրերութիւն ծրագրային համարակալուած հրահանգների:

Օրինակ՝ $3,5 + \sin 1,2$

արտայայտութեան արժէքը հաշուելու համար բաւական է ներտածել ստեղծնաշարին հետեւեալ հրահանգը.

PRINT 3,5+SIN(1,2)

Մեքենան անիմջապէս կը պատասխանի՝

4,43204

Այստեղ PRINT ծառայողական բառը նշանակում է տպիլ, այսինքն գրուած հրահանգը մեկնարաւանում է այսպէս՝

հաշուել եւ տպիլ $3,5 + \sin 1,2$ արտայայտութեան արժէքը:

Օգտագործելով PRINT հրահանգը անմիջական ոեժիմում կարելի է ինտերապետատորի միջոցով կատարել հզօր միկրոհաշուարկէի բոլոր գործողութիւնները: Աւելի մանրամասն մենք կը քննարկներ PRINT հրահանգը յաջորդ բաժնում, իսկ այստեղ նշենք, որ անմիջական ոեժիմում կարելի է օգտագործել Բեյսիկի հրահանգների մեծ մասը:

Աւելորդ չենք համարում յիշեցնել, որ ծրագրաւորման լեզուի ուսուցումը անհնարին է առանց էջՄ-ի հետ աշխատելու: Բոլոր բերուող օրինակները, վարժութիւնները եւ խնդիրները առաջարկում ենք կատարել հաշուիչ մեքենայի միջոցով՝ ուշադիր հետեւելով նրա պատասխաններին եւ շտկելով հնարաւոր միավաները:

Ուշադիր դարձենք նաեւ լեզուի գերականութեան վրայ, որի չնչին խախտումը բերում է սխալների եւ որպէս հետեւանք՝ չաշխատող ծրագրի:

6. 3. Բեյսիկ լեզուի կառուցուածք

Ծրագրաւորման լեզուով կազմուած ծրագիրը իրենից ներկայացնում է տրուած ալգորիթմն իրականացնող հրահանդիների յաջորդականութեան:

